

սակայն մտքես չէր անցներ բնաւ, որ լուսաւորեալ դարուս մէջ ալ լողալու արհեստը չգիտնալը մոլութիւն համարուէր եւ իբր այն՝ ժողովրդեան ծաղու նշաւակ ըլլար:

Դիպուածով գտնուեցայ այսօր լոգարան մը՝ ուր բազմաթիւ հանդիսականներ աւագանին շուրջն աթոռակներու վրայ բազմած՝ աւագանի մէջ նետուողները կը դիտէին: Մեծն Վարդան ողբերգութիւնն այսչափ հանդիսական տեսած չունէր: Այս բազմութիւնը տեսնելով՝ ինքնիրենս կ'ըսէի. «մեր ազգայիները թատրոնի վարժեցնելու համար հարկ անհրաժեշտ է, որ թատերաբեմերու վրայ լոգարաններ շինուին եւ դերասաններն ու դերասանուհիները լոգարաններու մէջ մտնեն եւ հոն կատարեն իրենց դերերը:

Անոնք, որ Պետրոս Առաքեալի պէս հաւատք ունէին՝ մեծ յաջողութեամբ կը սողային ջուրին վրայ եւ բուռն ծափահարութիւններ կ'ընդունէին, ինչպէս նաեւ անոնք, որ դդում ունէին իրենց թելերուն վրայ՝ ջուրին երեսը կը մնային եւ հանդիսականներու կողմէ կը քաջալերուէին. իսկ անոնք, որ ո՛չ հաւատք ունէին եւ ո՛չ դդում՝ ջուրին տակը կ'երթային եւ մեծ դժուարութեամբ դուրս կը հանէին իրենց գլուխն... հանդիսականներու քահքահաձայն ծաղու ունկնդիր ըլլալու համար...:

Խղճիս դպաւ այս տեսարանն եւ դուրս ելայ. սակայն քանի քայլ առնելէս ետքը համոզուեցայ, թէ միայն լոգարաններու մէջ տեղի չունենար այս ծաղրն եւ թէ լոգարանէն դուրս ալ ամեն անհատ, ամեն տնօրէնութիւն, ամեն կառավարութիւն իրեն ասպարէզ ընտրած ծովու մէջ՝ ջուրին երեսը մնալու համար՝ դդումի պէտք ունի: Այս համոզումէ մղուած՝ որոշեցի դդում կապել.

Ա. Ապէտին բաշայի թելերուն,

Բ. Մեր թաղային վարժարաններուն,

Գ. Միացեալ ընկերութեան գործադիր ժողովոյն,

Դ. Մասիսի մէջ Վօլնէյի *Աւերակք* - ի թարգմանչին,

Ե. Երեւանու *Պսակին*,

Զ. Թուրքիոյ գրահաւոր նաւերուն,

Է. *Ծաղկաքաղ արհեստից եւ գիտութեանց* անուն հանդէսին:

Բայց ի՞նչ կ'ընեմ ես. այսպէս մի առ մի թուելով՝ տասը հատոր *Փորձ* կը լեցունեմ. համառօտեմ խօսքս եւ ըսեմ.